



ՄԱՐԻԱՆԱ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասիստենտ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԵՌԱՀԱՊՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱԾՄԱՆ ԱՌԱՋՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներորման համատեքստում կարևորագույն խնդիրներից է ՏՀՏ կիրառելիության առանձնահատկությունների ու ստմնափրությունն ուսանողների և դասավանդողների շրջանում: 2017 թվականին մենք կատարել ենք սոցիոլոգիական հետազոտություն՝ ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների ու աշխատակիցների շրջանում՝ բացահայտելու կրթության ոլորտում ՏՀՏ կառավարման գործընթացի հիմնական բնութագրին մերը, ինչի վերլուծության արդյունքներն էլ անկուիզել և ներկայացվել են սույն հոդվածում:

Հիմնաբառեր. տեղեկատվական տեխնոլոգիաներ, համացանց, ուսումնական գործընթաց, մասնագիտական կրթություն, ուսումնական հաստատություն

JEL: C8, L63, M59

Տնտեսության բոլոր ոլորտներում ՏՀՏ տարածումն ու արագ զարգացումը կրթության բնագավառում նորագույն տեխնոլոգիաների ներորման, կիրառման և կառավարման անհրաժեշտություն են առաջացնում: Այսօր անվիճելի է ժամանակակից տեխնոլոգիաների կարևորությունը, իսկ դրանց տիրապետելու պահանջը ենթադրում է կրթության նոր մոդելի կիրառում:

Ներկայումս ուսումնական գործընթացի արդյունավետության ապահովման նախապայմաններից է նորագույն տեխնոլոգիաների կիրառումը, սակայն, շատ դեպքերում ուսումնական գործընթացի մասնակիցները պարզապես տեղյակ չեն կրթության ոլորտում SCS ներդրման, կիրառման ու կառավարման ձևերի, եղանակների և, առհասարակ, հնարավորությունների մասին:

Ուսումնական գործընթացի բարելավման նպատակով SCS ներդրման համատեքստում կարևորագույն խնդիրներից է վերջիններիս կիրառության ուսումնասիրությունն ուսանողների և դասավանդողների շրջանում: 2017 թվականին իրականացրել ենք սոցիոլոգիական հետազոտություն ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների ու աշխատակիցների շրջանում՝ բացահայտելու կրթության ոլորտում SCS կառավարման գործընթացի հիմնական բնութագրիչները:

Հետազոտությունը կատարվել է ներկայացուցչական բազմաստիճան ընտրանքով. ընդգրկվել են ՀՀ բոլոր մասնագիտական կրթական հաստատությունները, այնուհետև, ներկայացուցչական համամասնությամբ, հաստատությունները բաժանվել են ըստ գումարելու մարզի, իրականացվող կրթական ծրագրի: Հաշվի առնելով վերոնշյալ չափանիշները՝ ընտրվել են համապատասխան ուսումնական հաստատություններ՝ 3% սահմանային սխալով, ընտրանքի ճշտությունը՝ 97%:

Նախ նշենք, որ, համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի, մասնագիտական կրթական ծրագրերը նպատակատրույթով են կրթության հանրակրթական և մասնագիտական մակարդակների հաջորդականության միջոցով համապատասխան որակավորման մասնագետների պատրաստմանը, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գիտելիքների ընդլայնման ու որակավորման բարձրացմանը: ՀՀ-ում մասնագիտական հիմնական կրթական ծրագրերն են՝

- նախնական մասնագիտական (արհեստագործական).
- միջին մասնագիտական.
- բարձրագույն մասնագիտական.
- հետբուհական մասնագիտական¹:


Անդրադառնալով հարցմանը՝ նշենք, որ փորձ է արվել հնարավորինս ապահովելու բոլոր մարզերի, սեռատարիքային խմբերի, կրթական ծրագրերի մասնակիցների և հարցաթերթիկով նախատեսված այլ թիրախային խմբերի ընդգրկվածությունը. տեղեկատվությունը հավաքագրվել է ստանդարտացված հարցման մեթոդով՝ օգտագործելով ստանդարտացված հարցաթերթիկ: Հարցումն անցկացվել է ինչպես էլեկտրոնային եղանակով, այնպես էլ անկետային հարցման միջոցով:

Հարցաթերթիկը մշակվել է հնարավորինս պարզեցված եղանակով՝ մեծ թվով պատասխաններ ապահովելու նպատակով: Բացի հիմնական բնութագրիչներից, հարցաթերթիկի միջոցով փորձել ենք պարզել, թե որքանով են ուսումնական հաստատությունները հագեցած անհրաժեշտ տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաներով, ինչ չափով է ուսումնական գործընթացի ժամանակ կիրառվում SCS, ինչպիսին է դասավանդողների և սովորողների տիրապետման մակարդակը, համացանցի առկայության աս-

¹Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 14.04.1999 թ., <http://edu.am/index.php?id=5&topMenu=-1&menu1=85&menu2=89&arch=0>

տիժանը, ինչպես նաև բացահայտել կրթական գործընթացում SCS կիրառման հետ կապված խնդիրները: Արդյունքում հնարավոր է դարձել բացահայտել կրթության մեջ SCS կառավարման հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղիները:


Հետազոտությանը մասնակցել են 657 ուսանող և աշխատակից Հայաստանի բոլոր մարզերից, որոնցից 482-ը՝ ուսանող, 175-ը՝ դասախոս (գծակար 1):



Գծանկար 1. Հարցվածների գրաղվածությունը և բաշխվածությունն ըստ ուսումնական հաստատության ձևի


Ըստ գծանկարում ներկայացված տվյալների՝ հարցվածների 30%-ը նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից են, իսկ 70%-ը՝ բարձրագույն: Նշենք նաև, որ հարցվածների 70,3%-ը (462) իգական, իսկ 29,7%-ը (195) արական սերի ներկայացուցիչներ են: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ աղջկները սոցիալապես ավելի ակտիվ են և արագ են արձագանքում հարցումներին:

Ուշագրավ է հարցմանը մասնակցած ուսանողների և դասախոսների տարիքային բաշխվածությունը. հարցվողների գերակշիռ մասը՝ 72%-ը, 17-25 տարեկաններն են:



Գծանկար 2. Հարցմանը մասնակցածների տարիքային բաշխվածությունը

Ըստ գծանկար 3-ի տվյալների՝ ուսանողների և դասախոսների 49%-ը Երևանի, իսկ 51%-ը ՀՀ մարզերի ուսումնական հաստատություններից են (գծանկար 3):



Գծանկար 3. Հարցվածների բաշխվածությունն ըստ բնակության վայրի և ուսումնական հաստատության

Գծանկարում ներկայացված են Երևանի և ՀՀ մարզերի մասնագիտական ուսումնական հաստատությունների հարցվածները: Ընտրանքում գերակշռում են Երևանի ուսումնական հաստատությունները: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ մայրաքաղաքում է կենտրոնացված ուսումնական հաստատությունների գերակշիռ մասը, ուստի նույն օրինաչափությունը պահպանվել է հետազոտության ընտրանքում:

Ելեկով վերոնշյալից՝ հանգամանորեն դիտարկենք մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը 2017 թվականին: Այսպես՝ ըստ ՀՀ ԿԳ ներկայացրած տվյալների, 2017 թ. դրությամբ ՀՀ-ում գործում են 25 նախնական մասնագիտական պետական ուսումնական հաստատություններ, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող 4 կրթահամալիր, 85 միջին մասնագիտական կրթություն իրականացնող պետական և 28 ոչ պետական լիցենզավորված միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ²: Ընդ որում, կատարված վերլուծությունը ցույց է տվել, որ ուսումնական հաստատությունների մոտ 41%-ը Երևանում է, իսկ 59%-ը՝ ՀՀ մարզերում:

Անդրադարձությունը բարձրագույն և հետքուհական կրթությանը՝ պետք է նշել, որ, ըստ ՀՀ ԿԳՆ տվյալների, ՀՀ-ում գործում են 27 պետական բարձրագույն և 31 լիցենզավորված ոչ պետական բարձրագույն մասնագիտական

² Տե՛ս ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայք՝ <http://edu.am/index.php/am/documents/index/100>

ուսումնական հաստատություններ, ինչպես նաև 12 ՀՀ-ում գործող պետական մասնակցությամբ բուհեր և արտերկրի պետական ու ոչ պետական բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնց գերակշիռ մասը՝ մոտ 86%-ը, մայրաքաղաքում է, իսկ 14%-ը՝ մարզերում³:

Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ ասպիրանտուրա ունեցող 59 գիտակրթական կազմակերպություններից 20-ը բուհեր են, 31-ը՝ ՀՀ ԳԱԱ ինստիտուտներ, 8-ը՝ այլ գիտական կազմակերպություններ: Սովորողների թիվը 1 178 է⁴: Դոկտորանտուրա ունեցող 10 գիտակրթական կազմակերպություններից 5-ը բուհերն են, 5-ը՝ գիտական կազմակերպություններ:

Այսպիսով՝ ըստ վիճակագրական տվյալների մեր վերլուծության, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և հատկապես բարձրագույն ուսումնական հաստատությունները կենտրոնացված են Երևանում, ինչով էլ բացատրվում է այն հանգանակը, որ հարցվածների մեջ մասը հենց Երևանից է:

Ուսումնասիրելով ուսումնական հաստատությունների ՏՀՏ հազեցվածության, ինչպես նաև ուսումնական գործընթացում դրանց կիրառման աստիճանը՝ հարցարերիկում ներառել ենք համապատասխան հարցեր, որոնց վերլուծության արդյունքները կարելի է տեսնել ստորև ներկայացված աղյուսակում.

Աղյուսակ 1

Ուսումնական հաստատությունների ՏՀՏ հազեցվածության և ուսումնական գործընթացում դրանց կիրառման աստիճանը


| Ձեր ուսումնական հաստատությունը հազեցած է անհրաժեշտ տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաներով | Այր | Մասսամբ | ՌՀ | Զգիտեմ | Ընդամենը |
|--|------------|----------------|-----------|---------------|-----------------|
| Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական | 68 | 101 | 8 | 22 | 199 |
| Բարձրագույն | 175 | 242 | 26 | 15 | 458 |
| Ընդամենը | 243 | 343 | 34 | 37 | 657 |
| Ձեր ուսումնական հաստատությունը նույն ուսումնական գործընթացի ժամանակ կիրարվում են ՏՀՏ | | | | | |
| Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական | 52 | 96 | 25 | 26 | 199 |
| Բարձրագույն | 198 | 203 | 34 | 23 | 458 |
| Ընդամենը | 250 | 299 | 59 | 49 | 657 |
| Ուսումնական գործընթացում Դուք օգտագործում եք ՏՀՏ | | | | | |
| Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական | 56 | 99 | 44 | - | 199 |
| Բարձրագույն | 216 | 197 | 45 | - | 458 |
| Ընդամենը | 272 | 296 | 89 | - | 657 |

³ Տե՛ս ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայք՝ <http://edu.am/index.php?menu1=93&menu2=145&arch=0>

⁴ Տե՛ս ՀՀ սոցիալական վիճակը 2015 թ. և դիմամիկ շարքեր 2011-2015, Վիճակագրական ժողովածու, Եր., 2016, էջ 2284-285:

Այսպիսով՝ «Զեր ուսումնական հաստատությունը հագեցած է անհրաժեշտ տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաներով» հարցին հարցվածների մեջ մասը՝ 52%-ը, պատասխանել է «մասամբ», 37%-ը՝ «այո», 6%-ը՝ «չգիտեմ» և 5%-ը՝ «ոչ»: Միևնույն ժամանակ, ուսումնական գործընթացում SCS կիրառության հետ կապված հարցման արդյունքները հետևյալն են. այդ՝ 38%, մասամբ՝ 46%, ոչ՝ 9%, չգիտեմ՝ 8%: 657 հարցվողներից 272-ը պատասխանել է, որ ուսումնական գործընթացում կիրառում է SCS, 296-ը՝ մասամբ, իսկ 89-ը՝ չի օգտագործում: Ելեկով վերոնշյալից՝ կարող ենք եզրակացնել, որ մասնագիտական ուսումնական հաստատությունները բավարար չափով հագեցած են SCS-ով, սակայն, միևնույն ժամանակ, ուսումնական գործընթացում SCS կիրառման մակարդակը ցածր է:

Ուսանողների և դասախոսների SCS տիրապետման մակարդակը և ուսումնական գործընթացում կիրառվող SCS օգտագործման աստիճանը կարելի է տեսնել ստորև ներկայացված գծապատկերներում (գծ. 4 և 5):




Գծանկար 4. SCS տիրապետման մակարդակը (%)

Ըստ գծանկարի՝ հարցվածների ընդամենը 6,5%-ն է, որ ամենին չի կարող օգտագործել SCS: Իրենց գիտելիքները բավարար են գնահատել և կարծում են, որ կարող են կիրառել SCS հիմնական գործիքները և Microsoft Word՝ մոտ 26%-ը: MS office փաթեթից օգտվել կարողացող և իրենց հմտությունները «լավ» գնահատողները կազմել են հարցվածների 27,1%-ը, «շատ լավ»՝ է գնահատել հարցվածների 56%-ը, իսկ «գերազանց»՝ 18,7%-ը: Սակայն պետք է նկատել, որ սա սուբյեկտիվ գնահատում է, քանի որ հիմնված է հարցվածների կողմից իրենց գիտելիքների գնահատման վրա:


Հատկանշական է, որ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների և աշխատողների շրջանում կատարված հարցումների տվյալների համաձայն՝ 458 հարցվածներից 23-ն է, որ ուսումնական գործընթացում ամենին չի կիրառում SCS, 95-ը կիրառում է բավարար չափով, 169-ը գնահատում է լավ, 112-ը՝ շատ լավ, իսկ գերազանց՝ ընդամենը 59-ը: Միևնույն ժամանակ, նախնական մասնագիտական և միջին մասնագիտա-

կան ուսումնական հաստատություններում 199 հարցվածներից 39-ը ամենահին չի կիրառում SCS, մինչդեռ բավարար՝ 63, լավ՝ 42, շատ լավ՝ 35, գերազանց՝ 20: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ ուսումնական հաստատություններում հարցվածների կողմից SCS կիրառման մակարդակը ևս ցածր է հատկապես նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:



Գծանկար 5. Ուսումնական հաստատությունում հարցվածների կողմից SCS օգտագործման աստիճանը (1-5 միավոր)

Ուշագրավ է նաև այս, թե ուսանողներն ու դասախոսները ուսումնական գործընթացում ինչ նպատակով են կիրառում SCS: Ըստ հարցումների տվյալների՝ ուսումնական գործընթացում SCS հիմնականում օգտագործվում է ուսումնական նյութերի որոնման և պատրաստման նպատակով (457 հարցված): Ուսանողների հետ հաղորդակցման և նյութերի փոխանցման նպատակով SCS-ից օգտվում է 297, Power point շնորհանդեսների պատրաստում և ներկայացում




Գծանկար 6. Ուսումնական գործընթացում SCS կիրառման նպատակը

Մեր կատարած ուսումնասիրության շրջանակներում առավել կարևոր է հասկանալ, թե կրթական գործընթացում SCS կիրառության հետ կապված ինչ խնդիրներ կան, որ ուսումնական նյութերն են կարևորում սովորողներն ու դասավանդողները, ինչպես են գնահատում SCS կիրառության ազդեցությունը կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման և կրթության որակի բարձրացման վրա:

Կրթական գործընթացում SCS կիրառության հետ կապված խնդիրները հասկանալու նպատակով հարցվողներին ներկայացվել են հետևյալ տարբերակները՝

- համակարգիչների անբավարար քանակ և համակարգիչների հնություն, SCS պակաս,
- համացանցի անբավարար մակարդակ,
- էլեկտրամերի սակավություն, միջազգային գրադարանների տեղեկատվական ռեսուրսների անհասանելիություն,
- ծրագրային ապահովման խնդիր,
- համակարգչային գիտելիքների պակաս,
- ոչ մի,
- այլ:

Արդյունքները ներկայացնենք գծանկարի միջոցով.




Գծանկար 7. Կրթական գործընթացում SCS կիրառության հետ կապված խնդիրները

Ինչպես արդեն նշեցինք, ուսումնական գործընթացում SCS կիրառման հետ կապված, առանձնացրել ենք մի շարք խնդիրներ: Դիտարկելով վերոնշյալ գծապատկերը՝ կարելի է տարբերակել երեք՝ առավել վաշ արտահայտված խնդիրներ. համակարգիչների անբավարար քանակ և համակարգիչների հիմն սերունդ, համացանցի անբավարար մակարդակ և էլեկտրամերի սակավություն, միջազգային գրադարանների տեղեկատվական ռեսուրսների հասանելիության բացակայություն, ինչն առնչվում է խնդրի տեխնիկական կողմին:

Կարևոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ 117 հարցվածի կողմից որպես առանձին խնդիր նշվել է նաև համակարգչային գիտելիքների պակասը, իսկ 167 հարցված նշել է, որ չի տեսնում ոչ մի խնդիր:

Կարևորենով համացանցի դերը ուսումնական գործընթացում՝ հետազոտության շրջանակներում առանձնակի ուսումնասիրել ենք նաև մասնագիտական ուսումնական հաստատություններում համացանցի հասանելիության աստիճանը, այդ բվում նաև գրադարաններում, ամբիոններում, ընթերցասրահներում և այլն: Այսպես՝ հարցվածների մեծ մասը համացանցի հասանելիության աստիճանը գնահատահել է բավարար և լավ: Սա վկայում է, որ մասնագիտական ուսումնական հաստատություններում համացանցը հասանելի է, բայց ոչ լիարժեք:



Գծանկար 8. Մասնագիտական ուսումնական հաստատություններում համացանցի հասանելիության աստիճանը (%)

Այսպիսով՝ << մասնագիտական ուսումնական հաստատություններում SCS կիրառելիության ուսումնասիրության շրջանակներում իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծությունից պարզ է դառնում, որ հարցվածների գերակշիռ մասը՝ մոտավորապես 91%-ը, կարծում է, որ SCS կիրառումը նպաստում է կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը և կրթության որակի բարձրացմանը, ընդամենը 2%-ն է կարծում, որ չի նպաստում, և մոտ 7%-ը այս հարցին պատասխանել է, որ չգիտի: Միևնույն ժամանակ, հարցվածների 41.4%-ն է նշել, որ կիրառում է SCS ուսումնական գործընթացում, ինչը, կարծում ենք, հիմնականում բացարկվում է կրթական գործընթացում SCS կիրառմանն առնչվող խնդիրներով:

Պետք է նշել, որ SCS ներդրումն ու մասնագիտական կրթական գործունեության մեջ լայնածավալ կիրառումը կարևոր նշանակություն ունեն նաև ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման և դասի մատուցման հարցում: Այստեղ անհրաժեշտ է կարևորել հատկապես հեռավար ուսուցման տեխնոլոգիաների զարգացումն ու ընդլայնումը, քանի որ դրանց միջոցով հնարավոր է փոխել ավանդական կրթության վերաբերյալ կարծրատիպերը:

Այսպիսով, հաշվի առնելով ՀՀ մասնագիտական կրթական համակարգում համացանցի հասանելիության և կիրառելիության աստիճանը, կարող ենք փաստել, որ մեր Երկրում առկա են SCS լայնածավալ կիրառելիության և հեռավար ուսուցման զարգացման անհրաժեշտ նախադրյալներ, և հետագյում արդեն հեռավար կրթության տեխնոլոգիաները կարող են կազմել կրթական համակարգի տեխնոլոգիական հագեցվածության որոշակի հատվածը:

Ամփոփելով հավելենք նաև, որ SCS մշակումը, կրթության մեջ դրանց ներորումը, կիրառումն ու կառավարումը, այնուամենայնիվ, ենթադրում են ծավալուն հետազոտական աշխատանքների իրականացում:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ սոցիալական վիճակը 2015 թ. և դինամիկ շարքեր 2011–2015, Վիճակագրական ժողովածու, Եր., 2016:
2. «Կրթության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 14.04.1999:
3. ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայք. www.edu.am

МАРИАНА КОЧАРЯН

Ассистент кафедры управления АГЭУ

Особенности и существующие проблемы использования информационных и телекоммуникационных технологий в сфере профессионального образования РА. С целью повышения эффективности учебного процесса, в контексте внедрения информационных и телекоммуникационных технологий (ИТТ), одной из важнейших проблем является изучение особенностей применяемости ИТТ среди студентов и преподавателей. В 2017 году с нашей стороны было проведено социологическое исследование среди студентов и работников профессиональных учебных заведений РА с целью выявления основных составных процесса управления ИТТ в сфере образования, и результаты исследования были обобщены и представлены в данной статье.

Ключевые слова: информационные технологии, интернет, учебный процесс, профессиональное образование, учебное заведение.

JEL: C8, L63, M59

MARIANA KOCHARYAN

Assistant at the Chair of Management at ASUE

The Current Issues and Specifications of Utilizing Informational and Telecommunication Technologies (ITT) in the Sphere of Professional Education of the RA. – In order to increase the efficiency in the context of investment in informational and telecommunication technologies (ITT) it is important to bear in mind and further research the specifications of ITT utilization among students and instructors. For that purpose, in 2017 we conducted sociological research among the students and instructors of professional educational institutions of the Republic of Armenia, in order to reveal the specifications and characteristics of ITT management procedures in the educational system, the results of the above mentioned analysis are summed up and presented in this article.

Key words: Informational technologies, the Internet, educational process, vocational/professional education, educational institution.

JEL: C8, L63, M59